



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵՋ

Քրիստոսի Հրաշափառ Յարուրթեան տօնին առիթով, Կիրակի, 12 Ապրիլին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի:

Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւ պիտի փոխանցէ զատկական իր պատգամը:

Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Էնսիւնյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ՝ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիւմեան: Նորթ Հոլիվուտի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Ս. Չատկուան Ս. Պատարագը պիտի մատուցուի Տ. Paul Assyrian-Chaldean Catholic եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 2:00-ին: Շրջանի հոգեւոր մատակարարն է Գերայ. Տ. Սիւռն Ծ. Կրդ. Ազնիկեան:

Արժ. Տ. Մեսրոպ Ա. Քիւնյ. Թաշճեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Լաս Վեկասի եկեղեցւոյ մէջ: Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Քիւնյ. Գամպուրեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Քոլորադո նահանգի Տէնվըր քաղաքի մեր համայնքին համար:

PRELATE TO CELEBRATE EASTER DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH

On the Feast of the Glorious Resurrection of our Lord Jesus Christ, on Sunday, April 12th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at St. Mary's Church in Glendale.

By the ordinance of the Prelate, H.E. Achbishop Yeprem Tabakian will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino, Very Rev. Fr. Barthev Gulumian at Holy Cross Cathedral in Montebello, Very Rev. Fr. Muron Aznikian at the North Hollywood Parish, Archpriest Fr. Mesrob Tashjian will be at the Las Vegas Parish, and Rev. Fr. Ashod Kambourian will celebrate services at the Colorado Parish.

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ ՄԵՌԵԼՈՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ս. Չատուրյան Տօնին առիթով, եւ համաձայն տարիներու աւանդութեան, ի յիշատակ համայն նկշեցելոց ազգիս հայոց, Երկուշաբթի, Ապրիլ 13-ին, առաւօտեան ժամը 10-ին, Hollywood Hills-ի Forest Lawn գերեզմանատան Hall of Liberty սրահին մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն եւ ապա անդաստանի արարողութիւն, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր:

Նմանապէս հոգեհանգստեան պաշտօն տեղի պիտի ունենայ Կլենտելի Forest Lawn գերեզմանատան Church of the Recessional եկեղեցւոյ մէջ: Արարողութեանց պիտի մասնակցին Թեմիս Հոգեւորականաց Դասու անդամները:

EASTER MEMORIAL DAY

On Monday, April 13th, the Prelate will preside over Easter Memorial Day requiem service at Forest Lawn in Hollywood Hills. The service begins at 10:00 a.m. and will take place at the Hall of Liberty.

Services will also be offered at the Church of the Recessional at the Glendale Forest Lawn.

Ս. ՊԱՏԱՐԱԳ «ԱՐԱՐԱՏ»՝ ՏԱՆ ՄԵՋ

Արեւմտեան մեր Թեմի տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս, Ս. Յարութեան Տօնին առիթով, Ուրբաթ, 17 Ապրիլի առաւօտեան, Ս. եւ Անմահ Պատարագ պիտի մատուցուի «Արարատ Տան» Միջըն Հիլզի համալիրի մատրան մէջ, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւորականաց Դասու անդամներուն:

Առաւօտեան ժամը 10-ին, հոգեւորականաց դասը նախ պիտի այցելէ «Արարատ» Տան հիւանդանոցի բաժինը: Իսկ ժամը 10:30-ին, մատրան մէջ, Ս. Պատարագ պիտի մատուցէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Աւ. Զինյ. Վասիլեան:

EASTER DIVINE LITURGY AT ARARAT HOME

On the morning of Friday, April 17th, the Prelate will preside over Easter Divine Liturgy at Ararat Home in Mission Hills. Prelacy clergy members will participate in the Divine Liturgy, which is celebrated each year on this occasion.

Clergy members will visit the nursing facility at 10:00 a.m., followed by Divine Liturgy at the Chapel which will be celebrated by Pastor of St. Garabed Church Archpriest Fr. Vicken Vassilian.

ԱՄԱԳ ՀԻՆԳՉԱԲԹԻ ՕՐՈՒՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Աւագ Շաբթուան իւրաքանչիւր օրը ունի իր խորհուրդն ու պատգամը: Այս իմաստով, Աւագ Հինգշաբթին նուիրուած է իր աշակերտներուն հետ Յիսուսի Վերջին Ընթրիքին, որուն ընթացքին Մեծ Վարդապետը իր աշակերտներուն ոտքերը լուաց ու անոնց տուաւ խոնարհութեան ու ծառայասիրութեան անմոռանալի պատգամ մը:



Հինգշաբթի, 9 Ապրիլի առաւօտեան, Ս. Պատարագ տեղի ունեցաւ մեր բոլոր եկեղեցիներուն մէջ: Երեկոյեան, տեղի ունեցաւ Ոտնլուայի արարողութիւն, իսկ աւելի ուշ, տեղի ունեցաւ Յիսուսի մատնութիւնը եւ ձերբակալումը յիշատակող՝ խաւարման գիշերի արարողութիւնը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ոտնլուայի արարողութիւնը կատարեց Յովովուսի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ ու օրուան խորհուրդը վեր առնող պատգամ մը ուղղեց ներկայ հաւատացեալներուն: Սրբազան Հայրը յիշեցուց որ Վերջին Ընթրիքով՝ Զրիստոս այսօր կատարեց Ս. Հաղորդութեան խորհուրդի հաստատումը, երբ իր արիւնն ու մարմինը խորհրդանշող գինի ու հաց բաժնեց աշակերտներուն,

շեշտելով, որ անոնք իր զոհաբերութեան ու Նոր Ուխտի հաւատարմութեան խորհրդանշաններն են: Ոտքերու լուացումը յիշեցումն է խոնարհութեան, սիրոյ եւ ծառայասիրութեան: Այս խորհուրդը խորիմաստ է եւ տպաւորիչ: Աւանդութիւն մըն է որ եկած է մեզի դարերէն, բայց այդ աւանդութիւնը պետք չէ մնայ միայն աւանդութիւն, այլ պետք է անոր խորհուրդին թափանցենք: Մեր կեանքին մէջ այսօր ամէն մարդ կը հպարտանայ, կը յոխորտանայ եւ կ'ուզէ որ իր անունը ամէն տեղ գրուի: Յիսուս Զրիստոս, աշակերտներուն ոտքերը լուալու իր արարքով, մեզի խոնարհութիւն կը սորվեցնէ. հպարտութիւնը չէ Յիսուս Զրիստոսի ճանապարհը: Ան դիտել տուաւ որ մենք ստեղծուած ենք Աստուծոյ պատկերին համաձայն, պետք է այդ պատկերը պայծառ եւ լուսաւոր պահենք, բայց հպարտութիւնը կը ծածկէ այդ պատկերը: «Յիսուս Զրիստոս խոնարհեցաւ եւ իր աշակերտներուն ոտքերը լուաց, ան ոչ միայն այդ ձեւով խոնարհութիւն ցոյց տուաւ, այլ իր աստուածութենէն իջաւ եւ մարմնացաւ, մեզի համար չարչարուեցաւ, խաչուեցաւ», ըսաւ Առաջնորդ Սրբազանը եւ յորդորեց

հաւատացեալները Քրիստոսի օրինակով ըլլալ խոնարհ ու ծառայասէր ու շարունակեց ըսելով. «Իւրի օծումը կեանքի անուշ բուրմունքն է: Մեր սիրագեղ ծառայութեամբ եւ խոնարհութեամբ անուշաբոյր բուրմունք տարածենք մեր ընտանիքի բոլոր անդամներուն եւ բոլորին: Յիսուս Քրիստոս այսօր մեզի յիշեցուց իր փրկութեան խոստումը եւ յաւիտենական կեանքի հրաւերը տուաւ մեզի: Ան իր փրկագործութեան խոստումը նորոգեց: Անուշահոտ բուրմունքը վայելենք, Ս. Յոգույ շնորհքը ընդունինք եւ մենք զմեզ պատրաստենք, որպէսզի արժանի ըլլանք փրկութեան»:

Առաջնորդ Սրբազանը նաեւ յիշեցուց, որ 2009ը երիտասարդութեան նուիրուած է, հետեւաբար, յորդորեց ծնողներն ու երեց սերունդը, որ Աստուծոյ երկիւղով դաստիարակենք նոր սերունդը, որպէսզի ապագային դառնան մեր հաւաքական կեանքի առաջնորդներն ու ղեկավարները:



Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազանը եղաւ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի ծխական համայնքին հետ, հանդիսապետելով հաւարման Գիշերի արարողութիւններու:

Այս առիթով իր ուղղած պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը վեր առաւ Քրիստոսի աշխարհ առաքելութեան իմաստն ու կեդրոնացաւ Անոր երկրաւոր կեանքի վերջին օրերու իրադարձութեանց, անոնցմէ մեզի հասնող խորհուրդներուն ու թելադրանքներուն: Ան շեշտեց, որ Երկնաւոր Հայրը իր Միածինը աշխարհ ղրկելով՝ մարդուն հանդէպ իր սիրոյն արտայայտութիւնը կատարեց. Քրիստոս մարդուն մեղքերուն համար յանձն առաւ զոհուիլ, ինչ որ աստուածային սիրոյ գերագոյն արտայայտութիւնն է: Ան հարց տուաւ, թէ արդեօք մենք՝ իբրեւ քրիստոնէսներ, ի՞նչ չափով կը փոխադարձենք այդ սերը եւ ի՞նչպէս կ'արտայայտենք զայն: Հետեւաբար,

Առաջնորդ Սրբազանը մաղթեց, որ Աւագ Շաբթուան բազմախորհուրդ պատգամներով տոգորուած, հետեւինք աստուածային սիրոյ պատգամին, սիրենք մեր նմանները ու մեր կեանքն ու գործը առաջնորդենք սիրոյ այդ զգացումներով, հեռու՝ ատելութեան ու չար խորհուրդներու արգելակող ու խտորեցնող ազդեցութիւններէն:

PRELATE OFFICIATES OVER MAUNDY THURSDAY SERVICES

On Thursday, April 9th, Maundy Thursday services were conducted in commemoration of the Last Supper, the washing of the disciples' feet by Jesus, and His betrayal and arrest.

In the morning, Divine Liturgy was celebrated in all Churches. In the afternoon, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, officiated over the Washing of the Feet service at St. Garabed Church in Hollywood, and conveyed to the faithful the message of the day's services, starting with the commemoration of the Last Supper during which Jesus Christ established the sacrament of the Holy Eucharist when He shared bread and wine with His disciples symbolizing His body and blood. The Washing of the Feet service, he continued, is a reminder of His humility, love, and service, and commands us to be mindful of the fact that we were all created in His image and pride tarnishes that image, thus he urged the faithful to be humble, to serve in His example, and to ready ourselves spiritually for the salvation and eternal life promised to us by Jesus Christ. Reminding the faithful that this year is dedicated to the youth, the Prelate concluded by appealing to parents and grandparents to cultivate in our youth awe of the Lord and prepare them to be our leaders of tomorrow.

Later on in the evening, the Prelate presided over the solemn vigil service, commemorating the betrayal and arrest of Jesus Christ, at Holy Cross Cathedral in Montebello. In his address to the faithful, the Prelate spoke of the implications of Jesus' last few days on earth and the extent of His love for us as he took on our sins and died for our salvation. In this regards, the Prelate asked how we, as Christians, reciprocate that love and express our love for Him. Thus, he concluded by calling on the faithful to obey the Lord's commandment to love by loving one another and living our lives free of hate and hateful influences.

ՅԻՇԱՏԱԿ ՏԱՍԸ ԿՈՒՍԱՆԱՅ

Աւագ Շաբթուան Երեքշաբթին օրն է Քրիստոսի առակներէն՝ Տասը



Կոյսերու խորհուրդին յիշատակման: Այս առիթով, ինչպէս ամէն տարի, Արեւմտեան մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ Երեքշաբթի, 7 Ապրիլի երեկոյեան տեղի ունեցան յատուկ արարողութիւններ: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Նախագահեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեանց ու այս առիթով ուղղեց պատգամ

մը: Տասը կոյսերը կը ներկայացնէին Կիրակնօրեայ դպրոցի ուսուցչուհիներ ու աշակերտուհիներ: Առաջնորդ Սրբազանը վեր առաւ հինգ իմաստուն ու հինգ անմիտ կոյսերու վարմունքին իմաստը եւ կոչ ուղղեց հաւատացեալներուն, որ յարատեւ աղօթքով, բարի գործքով ու աստուածային պատգամներու կենսագործումով հոգեպէս միշտ պատրաստ ըլլան յաւիտենական կեանքը դիմաւորելու, հոգիներուն մէջ հաւատքի սերմերը արծարծ պահելու, ինչպէս կը թելադրէ հինգ իմաստուն կոյսերուն օրինակը:

COMMEMORATION OF HOLY TUESDAY

On the evening of Tuesday, April 7th, 2009, Holy Tuesday services, in commemoration of the Parable of the Ten Virgins, took place in all Prelacy Churches.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, officiated over the service and conveyed his message to the faithful at St. Mary's Church in Glendale. Sunday School teachers and students participated in the service representing the ten virgins.

The Prelate explained the meaning behind the parable and urged the faithful to follow in the example of the wise virgins by being resolute in our faith and spiritually ready at all times to receive eternal life.

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅԵՑ Ս. ՆԱՅՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵՋ

Կիրակի, 5 Ապրիլը Ծաղկազարդի տօնն էր: Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցանեց Էսսինոյի Ս. Նահատակաց Եկեղեցւոյ մէջ ու պատգամ մը ուղղեց հաւատացեալ ժողովուրդին:



Արարողութեան ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննէսեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգ. Վարչութեան անդամներ Տեարք Կարօ Աւագեան եւ Խաչիկ Երեցեան եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Առաջնորդ Սրբազանը փառք տուաւ Աստուծոյ, որ դարձեալ առիթը

շնորհած է Յիսուսի Երուսաղեմ յաղթական մուտքի խորհուրդին բաժնեկից ըլլալու. ան ողջունեց ներկաները, յատկապես հայրենի դիւանագիտական ներկայացուցիչը եւ խնդրեց, որ իր բարեմաղթութիւնները փոխանցէ Յայաստանի ու Արցախի պետութեանց վարիչներուն:

Առաջնորդ Սրբազանը ապա կանգ առաւ այս տօնի բարեփոխող խորհուրդին վրայ ու ընդգծեց, որ անիկա բոլորիս կը բերէ հոգեպէս ծաղկազարդուելու եւ Քրիստոնէութեան մեծագոյն տօնին՝ Քրիստոսի հրաշափառ Յարութեան պատրաստուելու պատգամը: Անդրադառնալով Քրիստոսի Երուսաղեմ մուտքի իմաստին, ան նկատել տուաւ, որ Յիսուսի մուտքը դիմաւորողները երեք խումբ էին. առաջին խումբը կը բաղկանար անոնցմէ, որոնք լսեցին ու հաւատացին խոստացուած փրկութեան, երկրորդ խումբը լսեց իր պատգամը, սակայն չանսաց անոր, եւ երրորդ խումբը՝ որ դեմ կանգնեցաւ Ասոր ու հետագային զինք մահուան դատապարտեց: Ան կոչ ուղղեց հաւատացեալներուն, որ վերստին ապրին Ծաղկազարդի խորհուրդն ու մթնոլորտը, ու մաս կազմեն վերոյիշեալ խմբաւորումներէն առաջինին, հաւատալով, որ Աստուած մեր փրկիչն է ու Ան իր արիւնը թափեց ի խնդիր մեր փրկութեան, հաւատարմօրէն հետեւիլ Ասոր պատգամներուն, հրաւիրել զինք, որ ապրի մեր սիրտերուն մէջ, ու գոչելու. «Ովսանա, օրհնեալ է Ան, որ կու գայ Տիրոջ անունով»: Իբրեւ ուխտաւորները այս մասնայատուկ օրուան, շարունակեց Առաջնորդ Սրբազանը, պէտք է աղօթք բարձրացնենք մեր Տիրոջ, որպէսզի ան մեզ ազատագրէ ու վեր բարձրացնէ մեր տկարութիւններէն, ամրապնդէ մեր հաւատքին մէջ, ու մենք վերանորոգենք մենք զմեզ, աճինք հոգեպէս, ու աւելին, հաւատքի սերմերը ցանենք մեր մանուկներուն ու երիտասարդներուն մէջ, որոնք վաղը կոչուած են ըլլալու մեր առաջնորդները:

Ինչպէս իր պատգամին մէջ ակնարկեց Առաջնորդ Սրբազանը՝ Ծաղկազարդը յատուկ նշանակութիւն ունի մանուկներուն համար, որոնք գունագեղ զգեստաւորուած ու մոմեր ի ձեռին, իրենց ծնողաց հետ միասին, մասնակից դարձան թափօրին ու ստացան Առաջնորդ Սրբազան Յօր օրհնութիւնները:

Յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ Դռնբացքի արարողութիւն: Արարողութիւնները վերջ գտան «Կիլիկիա»ի ու Յայաստանի Բայլերգի խմբերգումով:

PRELATE CELEBRATES PALM SUNDAY AT HOLY MARTYRS CHURCH

On Sunday, April 5th, 2009, Palm Sunday, H.E .Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at Holy Martyrs Church in Encino. Following Divine Liturgy, the Children's Procession took place, and subsequently the Opening of the Portals ceremony.

Among the hundreds of faithful in attendance were Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannisyan, Central Executive member Mr.

Khajag Dikijian, and Executive Council members Mr. Garo Avakian and Mr. Khatchig Yeretzian.

Prior to delivering his sermon, the Prelate thanked God for the opportunity to celebrate the triumphant entry of Jesus Christ into Jerusalem. He then greeted the faithful on this joyous occasion and specifically the Consul General, thanking him for his service and asking him to convey his well wishes to the leadership of Armenia and Artsakh.



The Prelate's sermon focused on the message of Palm Sunday which is the spiritual blossoming and preparing to celebrate the Glorious Resurrection of our Lord on Easter. He stated that there were three types of people who greeted Jesus during His entry into Jerusalem; those who heard, listened, and believed in His promise of salvation, those who heard His message but did not abide by His message, and those who opposed Him and would later condemn Him to death. He urged the faithful to relive the atmosphere of that first Palm Sunday and affirm that we belong to the group who heard, listened, and believed that He is our Lord and Savior Who shed His blood for our salvation, to faithfully follow His commandments, invite Him to live in our hearts, as we proclaim "Hosanna, blessed are You Who comes in the name of the Lord". The Prelate continued that as pilgrims of this special day, we must pray to the Lord to save us from our weaknesses and strengthen us in our faith, we must renew ourselves

and grow spiritually, and furthermore we must plant the seeds of faith in our children and youth to prepare them to be our leaders of tomorrow.

The Prelate was then led from the altar to the church courtyard for the Children's Procession, where the children and faithful were lined up to receive his blessings.

The Prelate and faithful returned to the hall where the Prelate conducted the Opening of the Portals ceremony, after which he beseeched Almighty God to bless the Godfather Gary Nareg Berberian and all the youth and lead them on His righteous path.

The services concluded with the collective singing of the Cilician and Armenian anthems.
